

## Պայմանագիր N \_\_\_\_\_

Սույն պայմանագիրը կնքվում է ARMTV.US-ի և  
միջև, բնակվող \_\_\_\_\_ հասցեում:

### Ընդհանուր դրույթներ

Այս պայմանագիրը կարգավորում է հեռուստատեսային հեռարձակման ծառայությունների տրամադրումը պատվիրատուին: ARMTV.US-ը տրամադրում է հեռուստատեսային հեռարձակման ծառայություններ առանց հատուկ սարքերի և լարանցման:

Ծառայություններից օգտվելու համար պատվիրատուն պետք է ունենա ինտերնետ հասանելիություն և առնվազն 2.5mbit արագություն՝ ավիթների որակյալ դիտման համար: Ծառայությունների ակտիվացման համար անհրաժեշտ է լրացնել armtv.us կայքում տեղադրված միացման [հայտը](#), նշելով անհրաժեշտ տեղեկությունները:

Հայտի ընդունման դեպքում պատվիրատուին էլ. փոստի կամ SMS հաղորդագրության ձևով տրամադրվում է username, password, device name, որի միջոցով նա ակտիվացնում է ծառայությունը: Ծառայությունների ակտիվացումը տևում է առավելագույնը 24 ժամ:

Այն դեպքում, երբ բաժանորդի հեռուստացույցը սմարթ տեսակի չէ, նրան տրամադրվում է սարք ծառայություններից օգտվելու համար: Ծառայությունների կասեցման դեպքում պատվիրատուն սարքը հետ է վերադարձնում ծառայություն մատուցողին: Սարքի արժեքի վճարման դեպքում այն մնում է պատվիրատուին:

Պատվիրատուին հասանելի է լինում հայալեզու, ռուսալեզու և անգլալեզու հեռուստաալիքներ: Ցանկության դեպքում հնարավոր է նաև այլ երկրների/լեզուների հեռուստաալիքների անվճար ավելացում:

Պատվիրատուն (բաժանորդը) օգտվում է ծառայություններից ամսական կամ տարեկան բաժանորդագրությամբ, որի համար վճարում է որոշակի գումար կախված ընտրված փաթեթի տեսակից և արժեքից:

Ծառայությունների դադարեցման դեպքում բաժանորդը պետք է էլ. նամակ ուղարկի [info@armtv.us](mailto:info@armtv.us) հասցեին, նշելով իր անուն ազգանունը և օգտագործողի անունը կամ զանգահարել 747-270-7399 համարով:

Պատվիրատուն յուրաքանչյուր պահի կարող է դադարեցնել իրեն տրամադրվող ծառայությունը առանց հավելյալ տույժերի և տուգանքների:

### Ծառայություններ մատուցողը պարտավոր է

- Պատվիրատուի մոտ 24 ժամվա ընթացքում ապահովել ծառայությունների հասանելիությունը
- Տեղեկացնել նախապես պլանավորված անջատումների և տեխնիկական աշխատանքների մասին էլ. փոստով կամ SMS հաղորդագրության միջոցով
- Լուծել իրենից կախված այն խնդիրները, որոնք պատվիրատուին խանգարում են օգտվել ծառայություններից

### Ծառայություններ մատուցողն իրավունք ունի

- Փոփոխել փաթեթները, ալիքները, արժեքները, տրամադրման կարգը և ձևը նախապես մի քանի օր առաջ տեղեկացնելով բաժանորդին

Պատվիրատուն պարտավոր է

- Սարքի տրամադրման դեպքում ինսամբով վերաբերվել դրան և պահպանել աշխատունակությունը
- Առաջացած խնդիրների դեպքում անմիջապես տեղեկացնել ծառայություն մատուցողին էլ. փոստի, հեռախոսազանգի կամ կայքում գործող օնլայն չաթի միջոցով
- Պահպանել իրեն տրամադրված օգտագործողի անունն ու գաղտնաբառը և չտրամադրել դրանք այլ անձանց
- Պահպանել գործող սահմանափակումները և օգտագործել դիտման հնարավորությունը առավելագույնը երկու սարքով, որոնք միացված կլինեն մեկ ընդհանուր ցանցին
- Օգտագործել ծառայությունները միայն սեփական կարիքների համար
- Ինքնուրույն կազմակերպել անչափահասներին արգելվող ոչ անհրաժեշտ բոնուսների դիտումը

Պատվիրատուն հրավում է ունի

- Փոխել իր փաթեթը, ավելացնել կամ պակասացնել ալիքներ, այդ մասին մի քանի օր առաջ նախապես տեղեկացնելով ծառայություն մատուցողին
- Հրաժարվել ծառայություններից յուրաքանչյուր պահի առանց հավելյալ պարտավորությունների առաջացման

**Բաժանորդագրություն**

- Տարեկան բաժանորդագրություն
- Ամսական բաժանորդագրություն



Բաժանորդագրության արժեք \_\_\_\_\_

Վճարումների կարգը և հետ վերադարձը

- Ծառայությունների վճարման համար պատվիրատուի էլ. փոստի հասցեին ուղարկվում է հաշիվ-ապրանքագիր, որտեղ նա լրացնելով իր քարտի տվյալները և նշելով Save my card on file with armtv.us կետը կատարում է իր վճարումը:
- Բաժանորդագրվելու օրվանից հաշված պատվիրատուի քարտային հաշվից գանձվում է տվյալ ամսվա/տարվա բաժանորդային վճարը:
- Ծառայություններից հրաժարվելու դեպքում արդեն վճարված գումարի(ների) հետ վերադարձ չի արվում:
- Պատվիրատուի մոտ վատ որակի ինտերնետ կապը չի կարող պայմանագրի լուծման պատճառ դառնալ (պատվիրատուին տրվում է մինչև երեք օր ծառայության փորձարկման համար):

### Սարքավորման միացման ուղեցույց

- 1) Սարքավորումը միացնել էլեկտրականությանը և HDMI մալուխի միջոցով սարքավորումը միացնել հեռուստացույցին
  - 2) TV-ից մտնել համապատասխան HDMI-ը
  - 3) Settings-ի միջից ընտրել Network settings և TV box-ը միացնել ձեր տան ինտերնետի (wifi) ցանցին wifi-ի միջոցով
  - 4) Միացնել OTT application-ը և վայելել 600-ից ավել հեռուստաալիք
- Հարցերի դեպքում զանգահարել 747-270-7399



SHOT TV ...	Playboy Title is missing 00:08 - 01:00	Русская Ночь Сексуальный терапевт - 2 01:08 - 01:15	Brazzers TV Euro.. Title is missing 00:08 - 01:00	Шалун Только девочки: игрушки и.. 01:03 - 01:14	Candy ...
<b>ՀԱՅԿԱԿԱՆ(36)</b>					
1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Առաջին Ալիք Title is missing 00:08 - 01:00	2 21 Հար 21 00:08 - 00:25	3 m2 Հ2 ...	4 Հանր Title is missing 00:08 - 01:00	5 ARMENIA Արմենիա Tv HD Title is missing 00:08 - 01:00	6 Կենտրոն Title is missing 00:08 -
<b>USA(33)</b>					
1 Food Network	2 Ion Television	3 NYCTV Life Title is missing 00:08 - 01:00	4 CBS New York Title is missing 00:08 - 01:00	5 Hallmark Movies.. ...	6 Telemundo Title is missing 00:08 -
HD ORIG(39)					